Արձանագրություն h. 7

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 06.11.19 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 37 անդամներից 25-ը:
Նիստին ներկա էր ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար, ակադեմիկոս Գ.Գևորգյանը
Նիստը նախագահում էր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գ.Ղարիբյանը:

Օրակարգում՝

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (զեկուցող՝ դեկան Հ.Սարգսյան):

Բացելով նիստը նախագահողը ձայնը տվեց ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Սարգսյանին, որը ներկայացրեց մեկ տարում ֆակուլտետի գործունեության արդյունքները /զեկուցումը կցվում է թղթապանակային ձևով/:

Նա հիմնական ուշադրությունը դարձրեց կրթական գործընթացում տեղի ունեցած փոփոխությունների վրա. վերանայվել են ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական որոշ ծրագրերի ուսումնական պլանները և առանձին դասընթացների առարկայական ծրագրերը, ընդ որում դա շարունակական է լինելու: Առաջին անգամ պրակտիկայի ընտրությունը կատարվել է նախապես՝ օնլայն, ինչի արդյունքում հնարավոր է եղել խուսափել կրկնակի գրանցումից և հերթերից:

Նա անդրադարձ կատարեց հաշվետու տարում ամբիոնների գործունեությանը, ֆակուլտետի միջազգային կապերին, նշելով դրական կողմերը և բացթողումները, ինչպես նաև Սահմանադրական տնտեսագիտության գիտա-վերլուծական կենտրոնի ձեռքբերումներին,

Արտահայտվեցին.

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գ.Ղարիբյանը, պրոֆեսորներ Գ.Գալստյանը, Հ.Մնացականյանը, Ա.Մարկոսյանը, կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ դոցենտ Կ. Խաչատրյանը, Ա.Մինասյանը: Նրանք բոլորն էլ

գոհունակություն հայտնեցին դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքի վերաբերյալ և այն գնահատեցին դրական:

Դեկանի մեկ տարվա աշխատանքի մասին իր խոսքն ասաց նաև ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար, ակադեմիկոս Գ.Գևորգյանը, այն գնահատելով դրական: Նա անդրադարձավ նաև ԵՊՀ-ին և ֆակուլտետին առնչվող խնդիրների լուսաբանմանը:

Բաց քվեարկությամբ որոշեցին տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ.Սարգսյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել դրական:

Նիստի նախագահ.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գ.Ղարիբյան

Գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Համբարձումյան